

## Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Հնդկաստանի Հանրապետության Կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա և նպատակ ունենալով զարգացնել երկու պետությունների միջև տնտեսական համագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

### Հոդված 1

#### ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2

#### ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտներից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների հարկեր են համարվում ամբողջ եկամտի կամ եկամտի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելածի և ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի նկատմամբ սահմանված հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես՝

ա) Հայաստանի դեպքում՝

i) շահութահարկ.

ii) եկամտահարկ.

iii) հողի հարկ.

(այսուհետ՝ հայկական հարկ).

բ) Հնդկաստանի դեպքում՝

եկամտահարկ, ներառյալ՝ վերջինիս հետ կապված ցանկացած լրացուցիչ գանձում.

(այսուհետ՝ հնդկական հարկ):



4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կձանուցեն իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած նշանակալի փոփոխության մասին:

### Հոդված 3

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում՝

ա) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն.

բ) «Հնդկաստան» տերմինը նշանակում է՝ Հնդկաստանի տարածք և ներառում է տարածքային ծովը և դրա վրայի օդային տարածքը, ինչպես նաև ցանկացած այլ ծովային գոտի, որի նկատմամբ Հնդկաստանն ունի ինքնիշխան իրավունքներ, այլ իրավունքներ և իրավասություն՝ Հնդկաստանի օրենքների և միջազգային իրավունքի համաձայն, ներառյալ «Ծովային իրավունքի մասին» Միացյալ ազգերի համաձայնագիրը.

գ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, կախված ենթատեքստից, նշանակում են՝ Հայաստանի Հանրապետություն կամ Հնդկաստանի Հանրապետություն.

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն, անձանց միավորում և համապատասխան Պայմանավորվող պետության գործող հարկային օրենքներով հարկման նպատակներով որպես հարկվող միավոր դիտարկվող ցանկացած այլ միավոր.

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած կորպորատիվ միավորում կամ հարկման նպատակներով որպես կորպորատիվ միավորում դիտարկվող ցանկացած այլ միավոր.

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է՝ բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև.

ի) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝



i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար կամ նրա լիազոր ներկայացուցիչներ կամ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրա լիազոր ներկայացուցիչներ.

ii) Հնդկաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարության կենտրոնական աշխատակազմ (պետական եկամուտների վարչություն) կամ դրա լիազոր ներկայացուցիչներ.

թ) «ազգային անձ» տերմինը Պայմանավորվող պետության կապակցությամբ նշանակում է՝

i) այդ Պայմանավորվող պետության ազգություն կամ քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ, և

ii) այդ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա.

ժ) «հարկ» տերմինը, կախված ենթատեքստից, նշանակում է՝ հայկական հարկ կամ հնդկական հարկ, սակայն չի ներառում որևէ գումար, որը ենթակա է վճարման ցանկացած պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ կապված այն հարկերի հետ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, կամ որն իրենից ներկայացնում է այդպիսի հարկերի հետ կապված տույժ կամ տուգանք.

ժա) «հարկային տարի» տերմինը նշանակում է՝

i) Հայաստանի դեպքում՝ օրացուցային տարի:

ii) Հնդկաստանի դեպքում՝ ապրիլի 1-ից սկսվող ֆինանսական տարի.

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին տրված է այդ Պետության օրենքով այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան, ընդ որում, այդ Պետության համապատասխան հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինին տրված նշանակության նկատմամբ:

#### Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որն այդ Պետության օրենքներով ենթակա է հարկման այդ Պետությունում իր մշտական բնակության, պաշտոնական բնակման, կառավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը և նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը: Այդ տերմինը, այնուամենայնիվ, չի ներառում որևէ անձի, որը այդ Պետությունում ենթակա է հարկման



միմիայն այդ Պետության արքյուրներից ստացված եկամտի առնչությամբ:

2. Երբ, 1-ին կետի դրույթներից ելնելով, ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան. իսկ եթե նա մշտապես բնակվում է երկու Պետություններում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են.

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում մշտապես չի բնակվում, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում էլ կամ նրանցից և ոչ մեկում սովորաբար չի բնակվում, համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է.

դ) եթե նա երկու Պետությունների քաղաքացի է, կամ դրանցից ոչ մեկի քաղաքացին չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե, 1-ին կետի դրույթներից ելնելով, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը: Եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

#### Հոդված 5

#### ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է՝

ա) ղեկավարման վայր.

բ) մասնաճյուղ.

գ) գրասենյակ.

դ) գործարան.

ե) արհեստանոց.



զ) առևտրի կետ.

է) պահեստ՝ կապված այն անձի հետ, որը պահեստավորման միջոցներ է տրամադրում այլ անձանց.

ը) ագարակ, պլանտացիա կամ այլ վայր, որտեղ իրականացվում է գյուղատնտեսական, անտառային, տնկարարական կամ այլ համապատասխան գործունեություն.

թ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանք, քարհանք կամ բնական պաշարների շահագործման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ շինարարությունը կամ տեղակայման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը կազմում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, եթե այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 270 օրը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի համարվում ներառող՝

ա) հարմարությունների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակվելու նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

ե) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

զ) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես «ա»-ից «ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, երբ անձը, որը այլ է, քան անկախ կարգավիճակով գործակալը, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը, Պայմանավորվող պետությունում գործում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում՝ այդ անձի



կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության կապակցությամբ, եթե այդպիսի անձը՝

ա) այդ Պետությունում ունի ու սովորաբար օգտագործում է այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն՝ բացառությամբ, երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն, այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության, կամ

բ) չունի ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, սակայն առաջինը հիշատակված Պետությունում սովորաբար պահում է ապրանքների կամ արտադրանքի պահեստ, որտեղից ձեռնարկության անունից կանոնավորապես առաքումներ է իրականացնում, կամ

գ) սովորաբար ձեռնարկության համար պատվերներ է ապահովում առաջինը հիշատակված Պետությունում՝ ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ:

6. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ապահովագրական ձեռնարկությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, համարվում է մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե նա այդ մյուս Պետության տարածքում ընդունում է ապահովագրավճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից այնպիսի անձի միջոցով, որը չի հանդիսանում անկախ կարգավիճակով գործակալ, որի նկատմամբ կիրառվում է 7-րդ կետը:

7. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունն այդ Պետությունում իրականացնում է բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Սակայն, սույն կետի իմաստով, այդ անձը չի համարվի անկախ կարգավիճակով գործակալ, եթե այդպիսի գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվի այդ ձեռնարկության անունից:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից յուրաքանչյուրին չի դարձնում մյուսի մշտական հաստատություն:



**Հոդված 6**  
**ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքի համաձայն, որտեղ գտնվում է խնդրո առարկա գույքը: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, նավակները և օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

**Հոդված 7**  
**ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միմիայն այդ Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները՝ այն դեպքում, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է այդ Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ստանալ՝ լինելով ինքնուրույն ու առանձին ձեռնարկություն, նույն կամ



համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն և գործելով լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցվող համարել այդ մշտական հաստատության ձեռնարկատիրական նպատակներով կատարված ծախսերը, ներառյալ այդ նպատակներով կատարված կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, որոնք կատարվել են ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլ տեղում՝ այդ Պետության հարկային օրենքների դրույթներին համապատասխան և դրանցով սահմանված չափով:

Սակայն չի թույլատրվում նվազեցնել այն գումարները, եթե այդպիսիք կան, որոնք մշտական հաստատության կողմից վճարվել են ձեռնարկությանը (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ համանման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ դեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի մշտական հաստատությանը վճարված գումարները (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության կողմից՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիների, հոնորարների կամ համանման այլ վճարումների տեսքով, մատուցված հատուկ ծառայությունների կամ դեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց վճարված տոկոսների տեսքով:

4. Այնքանով, որքանով Պայմանավորվող պետությունում ընդունված է որոշել մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ձեռնարկության ամբողջ շահույթը իր տարբեր ենթամասերի միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետը ոչ մի կերպ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում շարադրված սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի՝ միևնույն եղանակով, մինչդեռ չկա այն փոխելու համար հիմնավոր և բավարար պատճառ:



7. Այն դեպքում, եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### Հոդված 8

#### ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող տրանսպորտային ձեռնարկության միջազգային փոխադրումներում ապրանքների կամ արտադրանքի տեղափոխման նպատակով օգտագործվող բեռնարկղերի (ներառյալ այդ բեռնարկղերի փոխադրմանը վերաբերող սարքավորումները և կցասայլերը) օգտագործումից, պահպանումից կամ վարձակալության տալուց ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե միայն այդ բեռնարկղերը չեն օգտագործվում բացառապես մյուս Պայմանավորվող պետության տարածքում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

### Հոդված 9

#### ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և երկու դեպքերից յուրաքանչյուրում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են անկախ ձեռնարկությունների միջև ստեղծված պայմաններից տարբերվող պայմաններ, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով այդ ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որը հարկվել է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունից այդ մյուս Պետությունում, և այդ կերպ



ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլինեք առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

#### Հոդված 10 ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ կերպ գանձվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը: Սույն կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենքների, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:



5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս Պետությունը չի կարող ենթարկել որևէ հարկման ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և ընկերության չբաշխված շահույթը չի կարող հարկման ենթարկվել ընկերության չբաշխված շահույթից զանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

### Հոդված 11 ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենքների համաձայն, բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով զանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսներն այդ Պետությունում ազատվում են հարկումից, եթե դրանք ստացվել և փաստացիորեն տնօրինվել են՝

ա) մյուս Պայմանավորվող պետության Կառավարության, քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից, կամ

բ) i) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի կենտրոնական բանկի կողմից.

ii) Հնդկաստանի դեպքում՝ Հնդկաստանի պահուստային բանկի կողմից.

գ) ցանկացած այլ հաստատությունների կողմից, որոնց վերաբերյալ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները նամակների փոխանակման միջոցով ժամանակ առ ժամանակ կարող են համաձայնության գալ:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և պարտատոմսերից կամ



փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար կիրառվող տույժերը սույն հոդվածի նպատակով որպես տոկոսներ չեն դիտվում:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարված տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ:

Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա, յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներից համապատասխան, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## Հոդված 12

### ՌՌՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին և տեխնիկական ծառայության համար վճարները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:



2. Սակայն այդպիսի ռոյալթին կամ տեխնիկական ծառայության համար վճարները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության օրենքների համաձայն. սակայն եթե ռոյալթիի կամ տեխնիկական ծառայության համար վճարի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի կամ տեխնիկական ծառայության համար վճարի համախառն գումարի 10 տոկոսը:

3. ա) «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների հեռարձակման համար օգտագործվող տեսաժապավենները, կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար.

բ) «տեխնիկական ծառայության համար վճարներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացված ցանկացած տեսակի վճարում, բացառությամբ սույն Կոնվենցիայի 14-րդ և 15-րդ հոդվածներում նշվածների, կառավարման, տեխնիկական կամ խորհրդատվական ծառայությունների, ներառյալ տեխնիկական կամ այլ անձնակազմի կողմից ծառայությունները, մատուցման համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի կամ տեխնիկական ծառայության համար վճարների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին կամ տեխնիկական ծառայության համար վճարը, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթին կամ տեխնիկական ծառայության համար վճարները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին կամ տեխնիկական ծառայության համար վճարները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն երբ ռոյալթի կամ



տեխնիկական ծառայության համար վճարներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի կամ տեխնիկական ծառայության համար վճարներ վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթի կամ տեխնիկական ծառայության համար վճարների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին կամ տեխնիկական ծառայության համար վճարները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթի կամ տեխնիկական ծառայության համար վճարների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա, յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

### Հոդված 13

#### ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՆ

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային պատկանող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի, կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:



4. Ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից առաջացած գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել Պայմանավորվող պետությունում, եթե այդ ընկերության ակտիվները ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիմնականում կազմված են այդ Պետությունում գտնվող անշարժ գույքից:

5. 4-րդ կետում հիշատակված բաժնետոմսերից տարբերվող բաժնետոմսերի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության մոտ առաջացած գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ Պետությունում:

6. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

#### Հոդված 14

##### ԱՆԿԱԽ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ համանման բնույթի այլ անհատական գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, բացառությամբ հետևյալ հանգամանքների, երբ այդպիսի եկամուտը կարող է հարկվել նաև մյուս Պայմանավորվող պետությունում՝

ա) եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու նպատակով կանոնավոր կերպով իր տրամադրության տակ ունի հաստատուն բազա. այդ դեպքում այդ մյուս Պետությունում կարող է հարկվել եկամտի միայն այն մասը, որը վերագրելի է այդ հաստատուն բազային, կամ

բ) եթե ֆինանսական տարվա ընթացքում ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում մյուս Պայմանավորվող պետությունում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները կազմում կամ գերազանցում են ընդհանուր առմամբ 183 օրը: Այդ դեպքում այդ մյուս Պետությունում կարող է հարկվել եկամտի միայն այն մասը, որը ստացվել է այդ մյուս Պետությունում իր կողմից իրականացված գործունեությունից:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, գեղարվեստական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

#### Հոդված 15

##### ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման



այլ վարձատրությունները ենթակա են հարկման միմիայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միմիայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

#### **Հոդված 16**

##### **ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ**

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

#### **Հոդված 17**

##### **ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՍԱՐՁԻԿՆԵՐ**

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ



ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ որպես արվեստի գործիչ կամ մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունը իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում երկու Պայմանավորվող պետությունների միջև համաձայնեցված մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

### **Հոդված 18**

#### **ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ**

Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ անցյալում կատարած վարձու աշխատանքի համար Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

### **Հոդված 19**

#### **ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) այնուամենայնիվ, այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝

i) հանդիսանում է այդ Պետության քաղաքացի, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամներից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված որևէ կենսաթոշակ ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:



բ) սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, ռոճիկի և համանման այլ վարձատրությունների, ինչպես նաև կենսաթոշակների նկատմամբ:

### **Հոդված 20**

#### **ԴԱՍԱԽՈՄՆԵՐ, ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ**

1. Դասախոսը, ուսուցիչը կամ գիտահետազոտողը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ազատվում է հարկումից այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ Պայմանավորվող պետության կառավարության կողմից հավատարմագրված համալսարանում, քոլեջում կամ այլ համանման ուսումնական հաստատությունում դասավանդման կամ հետազոտման համար ստացած վարձատրություններից այդ Պետություն ժամանելուց հետո 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում հետազոտություններից ստացված եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները անց են կացվել ոչ թե հասարակական շահերի այլ որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

3. Սույն հոդվածի նպատակներով ֆիզիկական անձը կդիտվի որպես Պայմանավորվող պետության ռեզիդենտ, եթե նա հանդիսացել է այդ Պետության ռեզիդենտ այն ֆինանսական տարում, որում այցելել է մյուս Պայմանավորվող պետություն, կամ անմիջապես դրան նախորդող ֆինանսական տարում:

### **Հոդված 21**

#### **ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

1. Ուսանողը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ազատվում է հարկումից այդ մյուս Պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած դրամաշնորհներից, փոխառություններից և, կրթաթոշակներից բացի, նաև այլ վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումները առաջացել են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Բացի այդ՝ դրամաշնորհներից, կրթաթոշակներից և 1-ին կետում չընդգրկված վարձու աշխատանքից ստացված վճարումների մասով՝ 1-ին կետում նշված ուսանողը կամ ստաժորը ուսման կամ մասնագիտացման



ընթացքում իրավունք ունի օգտվելու հարկերի գծով նույն արտոնություններից, ազատումներից կամ նվազեցումներից, որոնք հնարավոր են իր ժամանած Պայմանավորվող պետության ռեզիդենտների համար:

3. Սույն հոդվածը տարածվում է միայն այն ժամանակաշրջանի վրա, որն անհրաժեշտ է կամ սովորաբար պահանջվում է նախաձեռնված ուսումը կամ մասնագիտացումն ավարտելու համար:

## **Հոդված 22** **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չնշված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարրերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

3. Անկախ 1-ին կետի դրույթներից, եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետության աղբյուրներից՝ վիճակախաղերի, խաչբառերի, գլուխկոտրուկների, մրցարշավների, ներառյալ ձիարշավները, թղթախաղերի և ցանկացած այլ տեսակի ազարտային կամ նման բնույթի որևէ այլ գրազային խաղերի տեսքով, ապա այդպիսի եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

4. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տարրերը կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

## **Հոդված 23** **ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆ ՍԵԹՈՂՆԵՐԸ**

Կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ՝

1. Հայաստանի դեպքում՝

ա) եթե, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը կարող է հարկվել Հնդկաստանում, Հայաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի



հարկի նվազեցում Հնդկաստանում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով.

սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի նախքան նվազեցման կատարումը հաշվարկված հարկի գումարի այն մասը, որը, ելնելով հանգամանքներից, վերագրելի է Հնդկաստանում հարկման ենթակա եկամտին.

բ) եթե, Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը ազատված է հարկումից Հայաստանում, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, այդպիսի ռեզիդենտի մնացած եկամտի համար հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել ազատված եկամուտը:

## 2. Հնդկաստանի դեպքում՝

ա) եթե Հնդկաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը սույնևն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ կարող է հարկվել Հայաստանում, Հնդկաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում Հայաստանում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի նախքան նվազեցման կատարումը հաշվարկված հարկի գումարի այն մասը, որը, ելնելով հանգամանքներից, վերագրելի է Հայաստանում հարկման ենթակա եկամտին.

բ) եթե, Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Հնդկաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը ազատված է հարկումից Հնդկաստանում, ապա Հնդկաստանը, այնուամենայնիվ, այդպիսի ռեզիդենտի մնացած եկամտի համար հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնվել ազատված եկամուտը:

## Հոդված 24

### ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս Պետության



ձեռնարկության հարկումն է: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան պարտավորությունների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրելու, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը արգելող մյուս Պայմանավորվող պետության ընկերության մշտական հաստատության շահույթը հարկելու՝ առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ներքին օրենքների դրույթներին համապատասխան, ոչ էլ 7-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին հակասող:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչ որ պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ վերահսկվում է նրանց կողմից, չեն ենթարկվում առաջինը հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

5. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

## Հոդված 25

### ՓՈԽՀԱՄԱՉԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ,



Եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցումից հետո երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքում առկա որևէ ժամկետային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայիով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ: Այն դեպքում, երբ համաձայնության հասնելու համար նպատակահարմար կհամարվի կարծիքների բանավոր փոխանակումը, այդպիսի փոխանակությունը կարող է տեղի ունենալ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով:

## Հոդված 26

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկատվություն (ներառյալ փաստաթղթերը կամ փաստաթղթերի վավերացված պատճենները), որն անհրաժեշտ է Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից գանձվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի առնչությամբ սույն Կոնվենցիայի կամ ներքին օրենքների դրույթների կատարման համար՝ այնքանով, որքանով այդ օրենքներով սահմանված հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենքների սահմաններում ստացված տեղեկատվությունը, և կարող է տրվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են առաջին նախադասության մեջ հիշատակված



հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկատվությունը օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը բաց դատական նիստում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնելու իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնելու տեղեկատվություն (ներառյալ փաստաթղթերը կամ փաստաթղթերի վավերացված պատճեններ), որը հասանելի չէ իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնելու տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հանրային կարգին):

### Հոդված 27

#### ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունները օգնություն կցուցաբերեն միմյանց եկամտային հայցերի հավաքման գործում: Այս օգնությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանել սույն հոդվածի կիրառման եղանակը:

2. «Եկամտային հայց» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված ցանկացած տեսակի և բնույթի հարկի գծով առաջացած պարտքի գումար՝ այնքանով, որքանով այդպիսի հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային կամ ցանկացած այլ փաստաթղթի, որի կողմեր են հանդիսանում Պայմանավորվող պետությունները, ինչպես նաև այդպիսի գումարի հետ կապված տոկոսները, վարչական տույժերը և հավաքման կամ պահման ծախսերը:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենքների համաձայն և վերաբերում է այն անձի պարտքին, որն այդ պահին այդ Պետության օրենքներով չի կարող կասեցնել դրա հավաքագրումը, այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմինների պահանջով, գանձման նպատակով կընդունվի մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմինների կողմից: Այդ եկամտային հայցը կբավարարվի այդ մյուս



Պետության կողմից՝ իր սեփական հարկերի հարկադիր գանձման և հավաքագրման համար կիրառվող օրենքների դրույթների համաձայն՝ այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամտային հայցը այնպիսի հայց է, որի վերաբերյալ այդ Պետությունը կարող է, համաձայն իր օրենքի, գանձումն ապահովելու համար պահպանման միջոցներ ձեռնարկել, ապա այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմնի պահանջով, պետք է ընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով: Այդ մյուս Պետությունը պետք է, իր օրենքների դրույթներին համապատասխան, պահպանման միջոցներ ձեռնարկի այդ եկամտային հայցի առնչությամբ՝ այնպես, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը, եթե նույնիսկ այդ միջոցների կիրառման պահին եկամտային հայցը ենթակա չէ կատարման առաջինը հիշատակված Պետությունում, կամ պարտքը առնչվում է այն անձին, որն իրավունք ունի կասեցնելու դրա հավաքագրումը:

5. Չնայած 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերի նպատակներով ընդունված եկամտային հայցը ենթակա չէ այդ Պետությունում այդ Պետության օրենքներով եկամտային հայցի նկատմամբ՝ ելնելով իր բնույթից կիրառելի ժամանակային սահմանափակման կամ վերապահված որևէ գերակայության: Բացի այդ, 3-րդ և 4-րդ կետերի նպատակներով Պայմանավորվող պետության կողմից ընդունված եկամտային հայցը չի կարող այդ Պետությունում ունենալ որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով:

6. Պայմանավորվող պետության եկամտային հայցի գոյության, հիմնավորվածության կամ գումարի վերաբերյալ դատական վարույթները կարող են հարուցվել միայն այդ Պետության դատարանում կամ վարչական մարմիններում: Սույն հոդվածում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ իրավունքի առաջացում կամ տրամադրում այդպիսի դատական վարույթները մյուս Պայմանավորվող պետության դատարանում կամ վարչական մարմիններում հարուցելու համար:

7. Եթե Պայմանավորվող պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջների ներկայացումից հետո ցանկացած պահի, նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամտային հայցի հավաքագրումն ու առաջինը հիշատակված Պետությանը փոխանցումը, այդ եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ՝

ա) 3-րդ կետին համապատասխանող պահանջի դեպքում՝ առաջինը հիշատակված Պետության եկամտային հայցը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենսդրությամբ և պարտքը վերաբերում է



այն անձին, որն այդ պահին չի կարող, այդ Պետության օրենքների համաձայն, կասեցնել դրա հավաքագրումը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխան պահանջի դեպքում՝ առաջինը հիշատակված Պետության եկամտային հայցը, որի առնչությամբ այդ Պետությունը կարող է, իր օրենքների համաձայն, պահպանման միջոցներ ձեռնարկել դրանց հավաքագրումն ապահովելու համար,

ապա առաջինը հիշատակված Պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է ծանուցի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին այդ փաստի առթիվ և մյուս Պետության ընտրությամբ դադարեցնի կամ հետ վերցնի իր հայցը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչական փորձին հակասող վարչական միջոցառումներ.

բ) իրականացնելու հասարակական քաղաքականությանը հակասող միջոցառումներ.

գ) աջակցություն ցուցաբերել, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի իրականացրել հավաքագրման կամ պահպանման համար, հանգամանքներից կախված, իր օրենքներով կամ վարչական պրակտիկայով ընդունված բոլոր հնարավոր միջոցները.

դ) ցուցաբերելու աջակցություն այն դեպքերում, երբ վարչական բեռն այդ Պետության համար բացահայտորեն անհամամասնական է մյուս Պայմանավորվող պետության կողմից ստացվող եկամուտներին:

## **Հոդված 28**

### **ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ**

1. Բացի սույն հոդվածում նախատեսվածից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որը եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, օգտվում է սույն Կոնվենցիայով սահմանված արտոնություններից, որոնք տրամադրվում են Պայմանավորվող պետության ռեզիդենտներին, եթե միայն այդ ռեզիդենտը հանդիսանում է «որակավորված անձ» 2-րդ կետում սահմանված կարգով և բավարարում է այդպիսի արտոնություններից օգտվելու համար անհրաժեշտ Կոնվենցիայի մյուս պայմանները:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտը ֆինանսական տարվա համար հանդիսանում է որակավորված անձ, միայն եթե այդպիսի ռեզիդենտը՝

ա) ֆիզիկական անձ է, կամ

բ) որակավորված պետական միավոր է, կամ

գ) ընկերություն է, եթե՝



i) իր բաժնետոմսերի հիմնական խումբը ընդգրկված է 6-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերում սահմանված հավատարմագրված ֆոնդային բորսայում և պարբերաբար շրջանառվում է մեկ կամ ավելի հավատարմագրված ֆոնդային բորսաներում, կամ

ii) ընկերության ընդհանուր ձայների և բաժնետոմսերի արժեքի առնվազն 50 տոկոսը ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինվում է հինգ կամ ավելի քիչ ընկերությունների կողմից, որոնք իրավունք ունեն օգտվելու սույն ենթակետի i ենթաբաժնում նշված արտոնություններից՝ պայմանով, որ անուղղակի տնօրինման դեպքում յուրաքանչյուր միջանկյալ սեփականատեր հանդիսանում է Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ, կամ

դ) բարեգործական կամ այլ հարկից ազատված միավոր է՝ պայմանով, որ կենսաթոշակային հիմնադրամի կամ որևէ այլ բացառապես կենսաթոշակներ կամ այլ համանման օգնություն ցուցաբերելու համար ստեղծված կազմակերպության դեպքում շահառու, անդամ կամ մասնակից ֆիզիկական անձանց ավելի քան 50 տոկոսը հանդիսանում է Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ, կամ

ե) ֆիզիկական անձից տարբերվող անձ է՝ պայմանով, որ՝

i) ֆինանսական տարվա առնվազն կեսը, «ա», «բ» կամ «դ» ենթակետերի կամ սույն կետի «ե» ենթակետի i կետի պայմանների համաձայն, որակավորված անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում են այդ անձի ընդհանուր ձայների կամ բաժնետոմսերի արժեքի կամ այլ եկամտաբեր տոկոսների առնվազն 50 տոկոսը, և

ii) հարկային տարվա ընթացքում անձի համախառն եկամտի ոչ ավելի, քան 50 տոկոսը ուղղակիորեն կամ անուղղակիորեն վճարվում կամ հաշվեգրվում է այն անձանց, որոնք չեն հանդիսանում Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ այն վճարումների առումով, որոնք նվազեցվում են սույն Կոնվենցիայում ընդգրկված հարկերի առնչությամբ այդ անձի ռեզիդենտության Պետությունում (բայց չեն ներառում ծառայությունների կամ ոչ նյութական ակտիվների գծով սովորական ձեռնարկատիրական գործունեության հետ կապված «մեկնած ձեռքի» և բանկերին ֆինանսական պարտավորությունների դիմաց իրականացրած վճարումները՝ պայմանով, որ եթե այդպիսի բանկը Պայմանավորվող պետության ռեզիդենտ չէ, ապա այդպիսի վճարումը վերագրվում է Պայմանավորվող պետություններից մեկում տեղակայված բանկի մշտական հաստատությանը):

3 ա) Պայմանավորվող պետության ռեզիդենտը կարող է օգտվել Կոնվենցիայի արտոնություններից մյուս Պետությունից ստացած եկամտի տարրերի առնչությամբ՝ անկախ ռեզիդենտի որակավորված անձ լինելու



հանգամանքից, եթե ռեզիդենտն ակտիվ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում առաջինը հիշատակված Պետությունում (որն այլ է, քան ռեզիդենտի սեփական շահի համար ներդրումների իրականացման կամ դրանց կառավարուման հետ կապված գործունեությունը, բացառությամբ բանկի, ապահովագրական ընկերության կամ գրանցված ապահովագրական գործակալի կողմից իրականացվող բանկային կամ ապահովագրական գործունեության դեպքերի), և մյուս Պայմանավորվող պետությունից ստացված եկամուտը կապված է կամ վերագրելի է այդ ձեռնարկատիրական գործունեությանը, և այդ ռեզիդենտը բավարարում է սույն Կոնվենցիայով սահմանված այդպիսի արտոնություններից օգտվելու մյուս պայմանները.

բ) եթե ռեզիդենտը կամ նրա փոխկապակցված ձեռնարկություններից որևէ մեկը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որը նպաստում է եկամտի տարրի աճին, ապա «ա» ենթակետը կիրառվում է այդպիսի տարրի նկատմամբ միայն այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեությունը առաջինը հիշատակված Պետությունում զգալիորեն գերազանցում է մյուս Պետությունում իրականացված ձեռնարկատիրական գործունեությանը: Սույն կետի իմաստով ձեռնարկատիրական գործունեության զգալի գերազանցումը կորոշվի բոլոր փաստերի և հանգամանքների հիման վրա.

գ) Պայմանավորվող պետությունում անձի՝ «ա» կետում նշված ակտիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առկայությունը որոշելու նպատակով ընկերակցության (որի մասնակից է այդ անձը) կողմից իրականացվող գործունեությունը և այդ անձի հետ կապված այլ անձանց կողմից իրականացված գործունեությունը համարվում են իրականացված այդ անձի կողմից: Անձը կարող է փոխկապակցված լինել այլ անձի հետ, եթե տնօրինում է նրա շահերի առնվազն 50%-ը (կամ, ընկերության դեպքում, ընկերության ընդհանուր ձայների և բաժնետոմսերի արժեքի առնվազն 50%-ը), կամ այլ անձն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է յուրաքանչյուր անձերի շահերի առնվազն 50%-ը (կամ, ընկերության դեպքում, ընկերության ընդհանուր ձայների և բաժնետոմսերի արժեքի առնվազն 50%-ը): Ամեն դեպքում, անձը համարվում է այլ անձի հետ փոխկապակցված, եթե բոլոր փաստերի և հանգամանքների հիման վրա մեկը վերահսկում է մյուսին, կամ երկուսն էլ գտնվում են միևնույն անձի կամ անձանց վերահսկողության տակ:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, եթե ընկերությունը Պայմանավորվող պետության ռեզիդենտ է կամ ընկերություն, որը վերահսկում է չվճարված բաժնետոմսերի խումբ ունեցող ընկերությանը՝

ա) որը ենթակա է ժամկետային կամ այլ կարգավորման, որն իրավունք է տալիս նրա սեփականատերերին մյուս Պայմանավորվող պետությունից ստացած ընկերության եկամտի մասի նկատմամբ, որն ավելի մեծ է, քան այն մասը, որը սեփականատերերը կստանային



այդպիսի ժամկետային կամ այլ կարգավորումների բացակայության դեպքում («եկամտի անհամամասնական մաս»), և

բ) ձայների մեծամասնությունը և արժեքի 50 կամ ավելի տոկոսը տնօրինվում են որակավորված անձ չհանդիսացող անձանց կողմից,

ապա սույն Կոնվենցիայի արտոնությունները չեն կիրառվում եկամտի անհամամասնական մասի նկատմամբ:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որը, 2-րդ կետի դրույթների համաձայն, ոչ որակավորված անձ է և ոչ էլ, 3-րդ կամ 4-րդ կետերի համաձայն, օգտվում է արտոնություններից, այնուամենայնիվ, կարող է օգտվել Կոնվենցիայի արտոնություններից, եթե այդ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինը սահմանում է, որ այդպիսի անձի հաստատությունը, ձեռքբերումը կամ գոյության միջոցները և նրա գործողությունների վարումը չեն բավարարում Կոնվենցիայի արտոնություններից օգտվելու գլխավոր պայմաններից որևէ մեկին:

6. Սույն Կոնվենցիայի նպատակներով «ճանաչված ֆոնդային բորսա» տերմինը նշանակում է՝

ա) Հայաստանում՝ ԱՐՄՄԵՔՍ,

բ) Հնդկաստանում՝ տվյալ պահին, 1956 թվականի Ապահովագրական կոնտրակտների (կանոնակարգի) 4-րդ բաժնի համաձայն, Կենտրոնական կառավարության կողմից հավատարմագրված ֆոնդային բորսա, և

գ) ցանկացած այլ ֆոնդային բորսա, որն իրավասու մարմինները համաձայն են ճանաչել սույն հոդվածի նպատակներով:

#### **Հոդված 29**

#### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ**

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնությունների վրա:

#### **Հոդված 30**

#### **ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր կժանուցեն միմյանց սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար համապատասխան օրենքներով պահանջվող ընթացակարգերի ավարտի մասին:

Կոնվենցիան ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցագրերից վերջինի ստացման ամսաթվից:

Սույն Կոնվենցիայի դրույթները գործում են՝



ա) Հայաստանում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) եկամուտների այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ,

բ) Հնդկաստանում՝

Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող ցանկացած ֆինանսական տարվա ապրիլի մեկին կամ ապրիլի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ:

### Հոդված 31

#### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում անորոշ ժամանակով. մինչև Պայմանավորվող պետության կողմից դադարեցվելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Կոնվենցիան այն ուժի մեջ մտնելու ամսաթվից հինգ տարին լրանալուց հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ, դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող պետությանը դադարեցման մասին ծանուցագիր ուղարկելով: Այդ դեպքում Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը՝

ա) Հայաստանում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ,

բ) Հնդկաստանում՝


աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու օրացուցային տարվան հաջորդող ցանկացած ֆինանսական տարվա ապրիլի մեկին կամ ապրիլի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:



Կատարված է Նյու Դելի քաղաքում 2003 թվականի հոկտեմբերի 31 ին,  
երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հինդի և անգլերեն  
լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:  
Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների առաջացման դեպքում  
գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝



Հնդկաստանի  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝



## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Դելիում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հնդկաստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Հնդկաստանի Հանրապետության Կառավարությունը,

ցանկանալով կնքել Արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն)՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Դելիում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հնդկաստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում փոփոխություն կատարելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին:

### Հոդված I

Կոնվենցիայի 26-րդ հոդվածի տեքստը (Տեղեկատվության փոխանակում) կփոխարինվի հետևյալով.

#### «Հոդված 26

#### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման կամ ներքին օրենքների կիրարկման համար կփոխանակեն, համաձայն կանխատեսումների, համապատասխան տեղեկատվություն (ներառյալ փաստաթղթերը կամ փաստաթղթերի վավերացված պատճենները) Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական



մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի և նկարագրության հարկի վերաբերյալ այն չափով, որ չափով հարկումը չի հակասում կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը 1-ին և 2-րդ հոդվածներով չի սահմանափակվում:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներքին օրենսդրության համաձայն ստացված տեղեկատվությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում կամ վերահսկում են 1-ին հոդվածով նշված հարկերը գնահատելը կամ զանձելը, հարկադիր բռնագանձումը կամ դատական հետապնդումը, բողոքարկումների քննությունը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկատվությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում: Անկախ վերոնշյալից՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկատվությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այդպիսի տեղեկատվությունը կարող է օգտագործվել այդպիսի այլ նպատակներով՝ համաձայն երկու Պայմանավորվող պետությունների օրենքների. տրամադրող Պայմանավորվող պետության իրավասու մարմինը լիազորում է այդպիսի օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) տրամադրել տեղեկատվություն, որը ձեռք չի բերվել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան կամ կառավարման բնականոն ընթացքում.

գ) տրամադրել տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ



առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկատվություն, որի բացահայտումը հակառուժ է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ եթե մի Պայմանավորվող պետությունը տեղեկատվություն է պահանջում, մյուս Պայմանավորվող պետությունը օգտագործում է տեղեկատվության հավաքման իր միջոցները՝ ստանալու համար պահանջված տեղեկատվությունը, եթե նույնիսկ այդ մյուս պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկատվության անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը 3-րդ կետով ենթակա է սահմանափակման, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետության թույլտվություն՝ խուսափելու տեղեկատվության տրամադրումից բացառապես այն պատճառով, որ նա չունի այդպիսի տեղեկատվության նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը թույլատրող՝ խուսափել տեղեկատվության տրամադրումից՝ բացառապես այն պատճառով, որ տեղեկատվությանը տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատություն, գործակալությունում աշխատող կամ այն ներկայացնող անձը, կամ քանի որ այն վերաբերում է անձի սեփականության շահերին»:

## Հոդված II


I. Պայմանավորվող պետությունները գիվանազիտական ուղիներով իրար կձանուցեն այն մասին, որ սույն՝ փոփոխություններ կատարող Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական պահանջներն ու ընթացակարգերը կատարված են:



Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ իրենց կառավարությունների կողմից համապատասխանաբար լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարվել է Նյու Դելի քաղաքում 2016 թվականի հունվարի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հինգի և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ յուր յուր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարածայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



Արմեն Մարտիրոսյան  
Հնդկաստանի  
Հանրապետությունում  
Հայաստանի Հանրապետության  
Արտակարգ և լիազոր դեսպան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



Առուն Կումար Ջեյն  
Ուդդակի հարկերի  
կենտրոնական վարչության  
նախագահ